

**Նախապատրաստական դասարանում սովորող,
լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի ձևավորման
ծրագրային պահանջները**

Լիդա Բալարեկյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-216>

Հանգուցային բառեր. *լսողության խանգարում, տեսողական պատկերացումներ, ներառական դպրոցներ, մատնախոսության այբբենարան, հիմնական հնչյուններ, փոխարինող հնչյուններ*

Հայտնի է, որ ներկայումս լսողության խանգարում ունեցող երեխաների մի մասը կրթությունը ստանում է ոչ թե ներառական դպրոցներում, այլ լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում (ծնողի ընտրությամբ, կախված երեխայի զարգացման մակարդակից): Ուսուցման սկզբնական շրջանում երեխաները անցնում են նախապատրաստական փուլ: Ընդունվելով նախապատրաստական դասարան, ծանոթանալով նոր միջավայրին, ձեռք բերելով նոր ընկերներ լսողության խանգարում ունեցող երեխայի մոտ առաջանում է շփման պահանջ: Դրա համար շատ կարևոր է, որ սկզբնական շրջանում մանկավարժը այդ շփման պահանջն օգտագործի խոսքի ձևավորման աշխատանքի մեջ: Որքան լսող երեխան ունի խոսելու ցանկություն, այնքան էլ լսողության խանգարում ունեցող երեխան ունի այդ պահանջմունքը: Այդ իսկ պատճառով ճիշտ կազմակերպված բանավոր խոսքի ուսուցման դեպքում կարելի է հասնել նրան, որ լսողության խանգարում ունեցող երեխաները հաղորդակցվեն բանավոր խոսքով, այլապես նրանք կկիրառեն հաղորդակցման այլ միջոցներ՝ ժեստերի լեզու, մատնախոսություն, որոնց հնարավորություններն, այնուամենայնիվ, սահմանափակ են:

Նախապատրաստական դասարանում խոսքի ձևավորմանն ուղղված աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է նախ և առաջ հաշվի առնել այս երեխաների մտավոր զարգացման առանձնահատկությունները:

Նախապատրաստական դասարանում մայրենի լեզվի ուսուցումը հիմք է հանդիսանում ողջ դպրոցական ուսուցման գործընթացը յուրացնելու համար: Լսողության խանգարում ունեցող երեխաները, չտիրապետելով հաղորդակցական լեզվական միջոցներին, հենվելով հիմնականում տեսողական պատկերացումների վրա, նախապատրաստական դասարանում իրենց մտածողության յուրահատկությունները դրսևորում են հենց բառապաշարի միջոցով: Այս երեխաների խոսքը շատ աղբատ է լինում՝ նույնիսկ անխոս:

Լսողության խանգարում ունեցող երեխաների դպրոցի նախապատրաստական դասարանի մայրենի լեզվի ուսուցման ծրագիրը (Ն. Եղիազարյան, «Փրագիր-ձեռնարկ լսողության խանգարում ունեցող երեխաների դպրոցի նախապատրաստական դասարանի համար») տարբերվում է հանրակրթական դպրոցի ծրագրից [1, 16]: Հանրակրթական դպրոցում առաջին դասարան են ընդունվում խոսք ունեցող երեխաներ, որոնց համար խոսքը վաղուց դարձել է թե՛ հաղորդակցման միջոց և թե՛ մտածողության գործիք, սակայն լսողության խանգարում ունեցող երեխաները հաճախ դպրոց են գնում անխոս, և առաջին իսկ օրից ուսումնասիրում են մայրենի լեզուն, նրա բառապաշարը, քերականական կողմը և այլն: Լսողության խանգարում ունեցող երեխաների ուսուցումն սկսվում է խոսքային հաղորդակցման կարողության մշակումից, իսկ դրան հասնելու համար նախ և առաջ պետք է լսողության խանգարում ունեցող երեխաների մեջ դաստիարակել խոսելու ցանկություն: Դրա

համար անհրաժեշտ է, որ երեխաները զգան միջավայրի ջերմությունը, հոգատարությունը, ուշադրությունը, սերը [2, 49]:

Լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի զարգացման ընթացքում կարևորվում են արտաբերական ունակությունների ձևավորումը, դրանց ամրապնդումը և սխալների կանխարգելումն ու շտկումը:

Այս երեխաների խոսքի զարգացման ծրագիրը նախատեսում է հետևյալ կարողությունների ուսուցումը.

- հասկանալ իրեն ուղղված խոսքը, կատարել հրահանգները, հայտնել խնդրանքը կամ ցանկությունը,
- տարբեր իրավիճակներում դիմել ընկերոջը, ուսուցչին,
- պատասխանել իրեն ուղղված հարցերին և ինքնուրույն ձևակերպել հարցեր,
- մասնակցել երկխոսությանը,
- հաղորդել իրականացվող գործունեության մասին [1, 67]:

Ծրագրով նախատեսվում են այս կամ այն խոսքային նյութի վրա աշխատանքի ժամկետները և ծավալը: Մայրենիի դասաժամերին օգտագործվող խոսքային նյութը պետք է համապատասխանի երեխաների տարիքային առանձնահատկություններին: Քանի որ նախապատրաստական դասարանում ուսուցանվող երեխաների հետաքրքրությունները և հաղորդակցման պահանջները բավականին բազմազան են, ուստի անհրաժեշտ է հնարավորինս կարճ ժամանակահատվածում ապահովել հաղորդակցման համար անհրաժեշտ խոսքային նյութի յուրացումը: Խոսքային նյութը պետք է ունենա այնքան ծավալ, որ երեխաները կարողանան յուրացնել այն: Լսողության խանգարում ունեցող երեխաները պետք է կարողանան տրված խոսքային նյութը ոչ միայն հասկանալ, այլև ակտիվորեն կիրառել հաղորդակցման գործընթացում [3, 149]:

Նախապատրաստական դասարանի սկզբնական շրջանի ծրագրային պահանջները տարաբնույթ են: Այդ պատճառով ծրագիրը ուսուցման սկզբնական շրջանում նախատեսում է, որ աշակերտները պետք է կարողանան արտաբերել իրենց, ընկերների, ուսուցիչների, դաստիարակների անուններն ու ազգանունները, ճանաչեն ընտանիքի անդամներին, գրենական պիտույքները, մրգերն ու բանջարեղենները, մարմնի մասերը, հագուստն ու կոշիկները, ընտանի կենդանիները:

Հետզհետե ընդլայնվում են աշակերտների գիտելիքները. նրանք պետք է կարողանան հարցնել դիմացինի անունը, ազգանունը, հասկանալ ու կատարել առաջադրանքները, հարց տալ կամ խնդրել ուսուցչին, հասկանալ տարրական հարցեր, պատկերացում ունենան եղանակի մասին և այլն: Աստիճանաբար ընդլայնվում են երեխաների գիտելիքները նշված ուղղություններով:

Ծրագրային պահանջները ուսուցման ընթացքում աստիճանաբար բարդանում են: Նախապատրաստական դասարանում լսողության խանգարում ունեցող երեխաների մայրենի լեզվի ուսուցումը տեղի է ունենում 2 փուլով՝ հիմնական և փոխարինող հնչյունների տիրապետմամբ: Հիմնական փուլի ժամանակ երեխաները սովորում և տիրապետում են մայրենի լեզվի հիմնական հնչյուններին (ա, օ, ու, ի, է, ը, պ, տ, կ, մ, ն, վ, ֆ, ս, լւ, շ, լ, ռ, հ): Մնացած հնչյունները մտնում են փոխարինող խմբի մեջ, և լսողության խանգարում ունեցող երեխաները դրանք յուրացնում են ուսուցման հաջորդ տարում: Այն հնչյունները, որոնք դեռևս չեն ուսուցանվել, թույլատրվում է փոխարինել հիմնական հնչյուններով: Սակայն փոխարինումը պետք է լինի որոշակի ձևով՝ յուրաքանչյուր հնչյուն պետք է փոխարինվի արտաբերությամբ մոտ հնչյուններով: Օրինակ՝ «բաժակի» փոխարեն կարող են արտաբերել «պաշակ»: Արդյունքում երեխան կարճ ժամանակահատվածում կարողանում է արտաբերել

ցանկացած բառ, որը հնարավորություն է տալիս ավելի արագ հարստացնել բառապաշարը [4, 97]:

Նախապատրաստական դասարանում մայրենի լեզվի ուսուցման ժամանակ առաջ-նահերթ պայմանը երեխաների խոսքի ձևավորումն է: Դրա համար նախ և առաջ կարևոր է, որ երեխան յուրացնի նաև նստելու կանոնները, գիրքը ճիշտ պահելու, գրիչը ճիշտ բռնելու կանոնները: Երեխայի մեջ պետք է ձևավորել կարդալու տարրական կարողություններ, կազմել բառեր կտրտված այբբենարանով, որն իրականացվում է նաև բանավոր խոսքի ուսուցման դասերի ժամանակ:

Ուսուցման սկզբնական փուլում լսողության խանգարում ունեցող երեխաները սովորում են գրել տառի մասնիկները, առավել պարզ գրություն ունեցող տառերը, հետզհետե աշխատանքը գնալով բարդանում է:

Օրագրով նախատեսված է նաև, որ ուսուցման երկրորդ փուլում լսողության խանգարում ունեցող երեխայի մեջ պետք է զարգացնել կարդալու տեխնիկան և դրա համար պետք է հետևել, որպեսզի կարդալու ընթացքում չաղավաղվի բառի կազմությունը (չլինեն տառերի, վանկերի բացթողումներ, տեղափոխումներ և այլն), որպեսզի բառը արտաբերվի սահուն, արտահայտիչ, շեշտադրված և այլն: Այդ խնդիրները շտկելու համար լսողության խանգարում ունեցող երեխաների հետ աշխատելիս օգտագործվում են ձայնաուժեղացուցիչ սարքեր:

Կարդալուն նախապատրաստելու աշխատանքը կատարվում է բանավոր խոսքի զարգացման դասերի ժամանակ: Խոսքային նյութը երեխաները սկսում կարդում են բանավոր-մատնախոսությամբ, իսկ հետո՝ միայն բանավոր: Այստեղ մեծ դեր է խաղում կտրտված այբբենարանը: Օգտագործվում են այդպիսի երկու այբբենարան. Առաջին փուլում մատնախոսության այբբենարան, երկրորդ կիսամյակում՝ տառային, որոնցով երեխաները կազմում են բառեր և բառակապակցություններ: Լսողության խանգարում ունեցող երեխաներին մատնախոսություն ուսուցանելու հետ միաժամանակ պետք է սովորեցնել նաև բառը ընկալել և՛ լսողությամբ, և՛ տեսողությամբ (շուրթերից կարդալով): Ուսուցիչը ուսուցման ընթացքում բառային շփումը իրականացնում է բանավոր մատնախոսությամբ և նույնը պահանջում է երեխաներից: Լսողության խանգարում ունեցող երեխաների բանավոր խոսքը ձևավորվում է մատնախոսության հետ միաժամանակ, նրանք բառը արտաբերում են, գուցա հետ նաև մատնախոսում:

Նախապատրաստական դասարանում մայրենի լեզվի ուսուցումը չի նախատեսում մատնախոսության նշանների մեկուսացված ուսուցում: Դրա յուրացումը իրականացվում է բանավոր խոսքի յուրացման գործընթացում ուսուցչին ընդօրինակելու միջոցով: Խոսքային նյութի յուրացումը հեշտացնելու համար օգտագործվում են բառային աղյուսակներ, որոնք գրված են մատնախոսության նշաններով: Այդ աղյուսակները մնում են դասարանում մինչև երեխաների կողմից դրանք լիարժեք յուրացվեն:

Կարևոր է, որ լսողության խանգարում ունեցող երեխաները երկրորդ կիսամյակում կարողանան լրացնել բաց թողնված տառերը, լրացնել կարճ նախադասությունները՝ նկարով, բառով, ավարտել տրված կարճ նախադասությունները և այլն [5, 115]: Լսողության խանգարում ունեցող երեխաներին պետք է ուսուցանել բարձրաձայն կարդալը, որի ժամանակ երեխաները ձայնաուժեղացուցիչ սարքերի օգնությամբ կարողանում են հետևել իրենց ընկերներին, նրանց կարդալը համեմատել իրենց կարդալու հետ: Կարողանալ կարդալ, նշանակում է տիրապետել կարդալու տեխնիկային, գիտակցաբար ընկալել կարդացածը, կարողանալ կողմնորոշվել կարդացած տեքստում և այլն:

Այսպիսով՝ նախապատրաստական դասարանում ծրագրային պահանջները հիմնվում են լսողության խանգարում ունեցող երեխաների կարողությունների մակարդակի վրա:

Նախապատրաստական դասարանում հիմնական նպատակը լսողության խանգարում

ունեցող երեխաների բանավոր խոսքի զարգացումն է և կարող ու գրել սովորելու աշխատանքի համար նրանց տեսականորեն, հոգեբանորեն, մտավոր, ֆիզիկապես նախապատրաստելն է: Լսողության խանգարում ունեցող երեխաները ընկալում և կատարում են միայն պարզ առաջադրանքները, իսկ երբ բարդանում են առաջադրանքները, նրանք դժվարանում են ընկալել այն: Նախապատրաստական դասարանի երեխաների համար մեծ նշանակություն ունեն պարզ առաջադրանքների և հրահանգների հասկացումն ու կատարումը, որը պետք է կազմակերպել հատուկ պլանավորված ձևով, և որում գլխավոր դերը պատկանում է սուրդոմանկավարժին [6]:

Նաև կարևոր է այս երեխաներին միասնական դասարանական կոլեկտիվի մեջ ընդգրկելը: Այս ամենի արդյունքում լսողության խանգարում ունեցող երեխաների հաղորդակցման համար պետք է ձևավորել խոսքը որպես հաղորդակցման միջոց և մտածողության գործիք:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-216>

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. Եղիազարյան Ն., Օրագիր-ձեռնարկ լսողության խանգարում ունեցող երեխաների նախապատրաստական դասարանի համար, Երևան, 2010:.
2. Боскис Р. М., Фингерман Л. Е. Развитие письменное речи в начальных классах школы слабослышащих, Москва, 1978.
3. Головчиц Л. А. Дошкольная сурдопедагогика, Москва, 1993.
4. Корсунская Б. Д. Методика обучения речи глухих дошкольников, Москва, 1996.
5. Носкова Л. П. Особенности развития и воспитания детей дошкольного возраста с недостатками слуха и интеллекта, Москва, 1984.
6. w.w.w. deafnet.ru

Требования к программе по развитию речи у детей с нарушением слуха в подготовительном классе

Лида Балабекян

Резюме

Ключевые слова: нарушение слуха, визуальное восприятие, инклюзивные школы, азбука сурдоперевода, основные звуки, заменяющие звуки

В статье обобщены те правила, которые должны строго соблюдаться в подготовительных классах школ с детьми, имеющими нарушения слуха. Особенно важно учитывать тот факт, что дети с нарушениями слуха в начальный период могут иметь некоторые затруднения в восприятии устной речи собеседника. Потому необходимо вести речь, сопровождаемую движениями пальцев и жестами. Во время составления слов и словосочетаний желательно иметь буквари двух типов, один из которых содержал бы движущиеся буквы. Это даст возможность эффективно и успешно осуществить учебный процесс с детьми, имеющими нарушения слуха

В статье представлены требования к программе по развитию речи у детей с нарушением слуха в подготовительном классе. Здесь обсуждается, что обучение этих детей начинается с развития навыков словесного общения, уделяя важное значение развитию навыков воспроизводства. В программе установлены сроки и объем работы над тем или иным языковым материалом. Языковой материал на уроках по родному языку должен соответствовать возрастным особенностям детей.

Program Requirements on Speech Development for Children with Hearing Impairment in Preparatory Class

Lida Balabekyan

Summary

Key words: *hearing impairment, visual perceptions, inclusive schools, sign language, basic sounds, substitute sounds*

The article summarizes primary rules that must be strictly observed in preparatory classes of public schools for the hearing impaired children. It is especially important to highlight the fact that children with hearing impairment may also have some difficulties in understanding another person's speech at the beginning, so it is necessary to accompany the language with a sign or a gesture. When composing words and phrases, it is desirable for the mother tongue teacher to have 2 types of primers: one of which will have movable letters. The above-mentioned rules will enable everyone to quickly and easily implement the education process with hearing impaired children.

The article outlines the software requirements for children with hearing impairments in the preparatory class. Here, it is important to mention that education of these children begins with the development of word communication skills, highlighting the formation of abstract abilities. The program envisages timing and scope of work on this or that word material. The word material used in the native language classes should correspond to the age-specific features of the children.

Ներկայացվել է 31.08.2023 թ.
Գրախոսվել է 30.10.2023 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.